Որպէս ասացաք յառաջագոյն · զի յայսպիսի կարեւոր խնդիրս չէ ինչ աւելի տարապարտ կրկնումն։ Մեք առանձին ընդ ուխտաւորս եւ ընդ համազգիս մեր կատարեսցուք զարարողութիւնս մեր, առանց խառնելոյ ուխտաւորաց եւ համազգեաց ձերոց, բաց 'ի մշտնջենաւոր պաշտօնէից Ս · Գերեզմանին։ Նոյնպէս և դուք կատարեսջիք զարարողութիւնս ձեր ընդ ուխտաւորս եւ ընդ համազգիս ձեր, առանց խառնելոյ և մտանելոյ ուխտաւորաց մերոց, բաց յայնցանէ որք սպասաւորեն Ս · Գերեզմանին։

Արդ՝ առաւել քան զայս ոչ կարեմք գրել յայտնի և բացորոշ զիրս · զի վստահ եմք, որ առանց երկուանալոյ հաւատայք բանից մերոց, որպէս և մեք չունիմք երկրայութիւն ինչ խոստմանց և երդմանց ձերոց։ Յորժամ բարւոք թարգմանեալ զնամակս 'ի միտ առջիք, յայնժամ արդար և ճշմարիտ դատանէք զգրեալսդ մեր։ Հարկ է ուրեմն եւ Սրբազնութեան ձերոյ գրել և տալ թուղթ ըստ օրինակիս այսմիկ՝ Փոխանորդին մերոյ։ Եւ զկնի թարգմանութեան նամակիս, առաքեցէք զայն յԵրուսաղէմ առ Ամեն · Պատրիարքն ձեր, եւ ծանուցանել նմա լուելեայն, զի մի անկարգութիւն ինչ պատահեսցի։ Նոյնպէս և ըզթուղթ Սրբազնութեան ձերոյ տաջիք թարգմանել 'ի մեր լեզու ձեռամբ Փոխանորդին մերոյ, և ապա առաքել զայն յԵրուսաղէմ։

Առաւել բարւոք թուի ինձ վարձել ընկերոջի մի կամ երկու հեծեալս, և անկասկած փութով առաքել զնամակսն յԵրուսաղէմ, զի հանդարտեսցին մեր և ձեր վանականքն՝ որ անդ։ Մեք ըստ կարծեաց մերոց աւելի լաւ համարիմք գաղտնի պահել զայս խնդիր 'ի միջի մերում, և չյայտնել ժողովրդոց վասն բազում պատճառաց։

Իսկ աղերսագիրն և նամակներքն, զորս առաքեալ էիք զմին ստորագրել և զայլն տալ ընթեռնուլ յեկեղեցիս, մնասցեն այժմ · զի խորհեսցուք 'ի միասին, զի դեռ ունիմք ժամանակ · զի յայսմ ամի Զատիկն անկանի յԱպրիլ ամսոյ · յորժամ 'ի մի վայր գումարիցիմք՝ որ ունի լինիլ յառաջիկայ ամսոյ, խօսեսցուք 'ի վերայ խնդրոյդ այդոցիկ · 'ի բաց թողեալ զայլ ամենայն գործս թէեւ 'ի մեծ